Տպագրված է ընդամենը 3 օրինակ

ՕՐԻՆԱԿ —-—

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ
2016թ. ——————————— -ի
թիվ ———————— հրամանով
Նախարար ——————— Ա. Ասատրյան

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԵՐԵՎՈՒՆՈՒ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺՆԻ ԿՈՂՄԻՑ
05.05.2003թ.
գրանցման թիվ 278.210.03431
վկայական թիվ 03 Ա 060424
հարկ վճարողի հաշվառման համար
00404146
03.10.2007թ. գրանցված կանոնադրության
թիվ 812 փոփոխությունը
ԳՐԱՆՑՎԱԾ Է ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ
20 թվականի թ.

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<< ԵՐԵԽԱՅԻ ԵՎ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
աշխատանքի և սոցիալական հարցերի
նախարարի 2016 թվականի սեպտեմբերի --- -ի
թիվ -------- հրամանի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<< ԵՐԵԽԱՅԻ ԵՎ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

I. Ընդհանուր դրույթներ

1. «Երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ նաև՝ կազմակերպություն) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է:

2. Կազմակերպությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>>, <<Սոցիալական աջակցության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:

3. Կազմակերպությունը ստեղծված է համարվում օրենքով սահմանված կարգով պետական գրանցման պահից:

4. Կազմակերպության գործունեությունը ֆինանսավորվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների կազմակերպությունների և ֆիզիկական անձանց նվիրատվություններից, բարեգործական նպատակներով տրամադրվող միջոցներից, իր կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեությունից և օրենքով չարգելված այլ միջոցներից:

5. Կազմակերպությունը որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, իր անունից կարող է կնքել պայմանագրեր, ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

6. Կազմակերպությունն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:

7. Հիմնադիրը պատասխանատու չէ կազմակերպության պարտավորությունների համար, իսկ կազմակերպությունը՝ իր հիմնադրի պարտավորությունների համար:

8. Կազմակերպությունն ունի Հայաստանի Հանրապետության պետական զինանշանի պատկերով և կազմակերպության հայերեն անվանմամբ կլոր կնիք ու դրոշմակնիք, ինչպես նաև ձևաթղթեր:

9. Կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, հաշվարկային հաշիվ բանկերում՝ Հայաստանի Հանրապետության արժույթով և արտարժույթով:

10. Կազմակերպությունը հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները հաշվարկում և վճարում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների համար նախատեսված կարգով ու չափերով:

11. Կազմակերպությունը պատասխանատու է Հայաստանի Հանրապետության օրենադրությամբ սահմանված պահանջները բավարարող կոմունալ, սանիտարահիգիենիկ և հակահրդեհային անվտանգության անհրաժեշտ պայմանների, իր գործունեության համար անհրաժեշտ ընդհանուր ու բնակելի մակերեսին, անձնակազմին (աշխատողների թվին և հաստիքներին), նրանց աշխատանքային պայմաններին, կազմակերպությունում միաժամանակյա խնամք ստացողների առավելագույն թվին, նրանց տրամադրվող սննդի չափաքանակին, դրա էներգետիկ արժեքին, կազմակերպության

անվտանգության ապահովմանը և այլ պայմանների ներկայացվող պահանջների պահպանման, ինչպես նաև երեխայի խնամքի և դաստիարակության համար անհրաժեշտ սոցիալական նվազագույն չափորոշիչների կիրառումն ապահովելու նպատակով:

12. Կազմակերպության անվանումն է՝

1) հայերեն լրիվ՝ «Երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն.

2) հայերեն կրճատ՝ «Երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ.

3) ռուսերեն լրիվ՝ государственная некоммерческая организация „Центр поддержки ребенка и семьи".

4) ռուսերեն կրճատ՝ „Центр поддержки ребенка и семьи" ГНО.

5) անգլերեն լրիվ՝ „Child and family support center" State non Commercial Organization.

6) անգլերեն կրճատ՝ „Child and family support center " SNCO:

13. Կազմակերպության գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան, Նուբարաշեն, Զնքուշի 14:

II. Կազմակերպության գործունեության առարկան և նպատակը

14. «Երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ը հանդիսանում է սոցիալական սպասարկում իրականացնող կազմակերպություն, որի հիմնական նպատակը կազմակերպության սպասարկման տարածքում երեխաներ ունեցող ընտանիքների՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու կանխարգելումը և (կամ) կյանքի դժվարին իրավիճակից դուրսբերումն է, այդ թվում՝ կազմակերպությունում ցերեկային ժամերին՝ կազմակերպության կանոնադրությամբ կամ այլ ներքին իրավական ակտերով սահմանված ժամանակահատվածում, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 3-18 տարեկան երեխաներին խնամք տրամադրելը, այդ երեխաների՝ ընտանիքում ապրելու և դաստիարակվելու իրավունքի իրականացմանն աջակցությունը:

15. «Երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի գործունեության առարկան կազմակերպության սպասարկման տարածքում երեխաներ ունեցող ընտանիքների՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու կանխարգելման և (կամ) կյանքի դժվարին իրավիճակից դուրս բերելու նպատակով սոցիալ-հոգեբանական. սոցիալ-մանկավարժական և սոցիալ-իրավական բնույթի սոցիալական ծառայությունների կազմակերպումը և (կամ) տրամադրումն է. կազմակերպությունում խնամք ստացող՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 3-18 տարեկան երեխաներին ցույց տրվող սոցիալ-հոգեբանական օգնության, իրավական խորհրդատվության, ուսումնադաստիարակչական ծառայությունների, մասնագիտական կողմնորոշման, արվեստի միջոցով թերապիայի, օկուպացիոն թերապիայի (շտկիչ վարժանքներով թերապիա) տրամադրումն է, աշխատանքային թերապիայի (16 տարեկանից բարձր երեխաների համար), առաջնային բժշկական օգնության և սպասարկման տրամադրման, ժամանցի, սոցիալական ներառմանն ուղղված այլ միջոցառումների կազմակերպումը:

16. Կազմակերպությունն իրականացնում է հետևյալ գործառույթները.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան իրականացնում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների ընդունելությունը (ընդ որում՝ երեխային խնամք տրամադրելու մասին պրակտիկ դիմումը կազմակերպություն ներկայացնելիս, կազմակերպության սոցիալական աշխատանքի մասնագետից, բժշկից և հոգեբանից կազմված մասնագիտական խմբի միջոցով իրականացնում է երեխայի կենսապայմանների ստուգում և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ գործառույթներ, իսկ սեփական նախաձեռնությամբ երեխային կազմակերպությունում խնամք տրամադրելու նպատակով իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված միջոցառումներ՝ այդ երեխայի ծնողի կամ այլ օրինական ներկայացուցչի գրավոր համաձայնության դեպքում),

2) երեխայի օրինական ներկայացուցչի հետ կնքում է պայմանագիր՝ կազմակերպությունում երեխային խնամք տրամադրելու վերաբերյալ, ընդ որում, 10 տարին լրացած երեխայի դեպքում՝ հաշվի է առնվում նաև նրա կարծիքը,

3) աջակցում է կազմակերպությունում խնամք ստացող երեխաներին՝ հարմարվելու նոր սոցիալական միջավայրում, ապահովում է ընտանեկանին առավել մոտ սոցիալ-կենցաղային պայմաններ,

4) կազմակերպությունում երեխայի ընդունելությունից հետո եռօրյա ժամկետում ապահովում է կազմակերպության սոցիալական աշխատանքի մասնագետի և համապատասխան լիազորություններով օժտված այլ աշխատողների (հոգեբան, բժիշկ, մանկավարժ և այլն) կողմից երեխայի սոցիալ-հոգեբանական վերականգնման անհատական ծրագրի կազմումը և դրան համապատասխան՝ երեխայի սոցիալ-հոգեբանական վերականգնման համար անհրաժեշտ միջոցառումների իրականացումը,

5) խնամքը տրամադրում է երեխայի գնահատված սոցիալական կարիքներին համապատասխան,

6) ապահովում է իր սպասարկման տարածքում բնակվող՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների (այդ թվում՝ կազմակերպությունում խնամք ստացող երեխաների) անհատական սոցիալական ծրագրերով կազմակերպությանը վերապահված իրավասությունների շրջանակներում նախատեսված միջոցառումների իրականացումը, անհատական սոցիալական ծրագրերով սահմանված խմբային (բազմամասնագիտական) քննարկումներին կազմակերպության սոցիալական աշխատանքի մասնագետի մասնակցությունը,

7) յուրաքանչյուր երեխայի նկատմամբ ցուցաբերում է անհատական մոտեցում՝ երեխայի զարգացման առանձնահատկություններին և նախասիրություններին համապատասխան,

8) կազմակերպությունում խնամք ստացող երեխաներին տրամադրում է սնունդ՝ օրական մեկ անգամ,

9) ըստ անհրաժեշտության ապահովում է կազմակերպությունում խնամք ստացող՝ դպրոցահասակ երեխաների դասապատրաստումը դպրոցական ժամերից հետո,

10) իրականացնում է կազմակերպությունում խնամք ստացող երեխաների ստեղծագործական ընդունակությունների և նախասիրությունների (նկարել, երգել, պարել, արտասանել և այլն) բացահայտմանն ուղղված աշխատանքներ՝ հաշվի առնելով նրանց տարիքային առանձնահատկությունները,

[illegible] կազմակերպությունում խնամք ստացող երեխաներին տրամադրում է [illegible] կողմնորոշում, աջակցում է նրանց աշխատանքային [illegible] ձևավորմանը և զարգացմանը,

[illegible] կազմակերպում է կազմակերպությունում խնամք ստացող երեխաների [illegible] բժշկական օգնության և սպասարկման տրամադրումը՝ [illegible] ամբուլատոր բժշկական հաստատությունում,

[illegible] կազմակերպում է կազմակերպությունում խնամվող երեխաների ազատ [illegible], այդ թվում՝ մարզական և մշակութային միջոցառումներին, արշավներին, [illegible] երեխաների մասնակցությունը, աջակցում է հոգևոր և [illegible] արժեքներին երեխաների հաղորդակցմանը,

[illegible] է անհրաժեշտ միջոցներ կազմակերպությունում խնամք ստացող, [illegible] նաև իր սպասարկման տարածքում բնակվող՝ կյանքի դժվարին [illegible] հայտնված կամ կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու վտանգի [illegible] ներքո գտնվող՝ նախադպրոցական և հանրակրթական ուսումնական [illegible]ություններից դուրս մնացած (կամ այդ հաստատություններ չհաճախող) [illegible] ուսումնական հաստատություններում տեղավորելու և նրանց [illegible]ությունն ապահովելու համար,

[illegible] իրականացնում է կազմակերպությունում խնամք ստացող, ինչպես նաև իր [illegible] տարածքում բնակվող՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված [illegible] կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու վտանգի (ռիսկի) ներքո գտնվող [illegible] վարքագծի և զարգացման շեղումների կանխարգելմանը, առողջ [illegible] ձևավորմանը, ստեղծագործական ընդունակությունների [illegible] միտված աշխատանքներ,

[illegible] իրականացնում է կազմակերպությունում խնամք ստացող, ինչպես նաև իր [illegible] տարածքում բնակվող՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված [illegible] կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու վտանգի (ռիսկի) ներքո գտնվող [illegible] հոգեբանական վերականգնմանն ուղղված անհրաժեշտ [illegible],

[illegible] կազմակերպությունում խնամք ստացող, ինչպես նաև իր սպասարկման [illegible] բնակվող՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված կամ կյանքի [illegible] իրավիճակում հայտնվելու վտանգի (ռիսկի) ներքո գտնվող [illegible] ունեցող երեխաների վերականգնողական անհատական [illegible] համաձայն, աջակցում է նրանց վերականգնողական օգնության [illegible] և սոցիալական ներառման գործընթացին՝ այդ նպատակով [illegible]գործակցելով բուժատեխնիկական հանձնաժողովի, վերականգնողական [illegible] տրամադրող մարմինների և կազմակերպությունների, սոցիալական [illegible]ության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության [illegible] պետական կառավարման մարմնի աշխատակազմում չընդգրկված և [illegible] գործող սոցիալական ծառայություններ տրամադրող [illegible] մարմինների՝ սոցիալական աջակցության տարածքային [illegible]ությունների և բաժինների հետ,

[illegible] կազմակերպությունում խնամք ստացող, ինչպես նաև իր սպասարկման [illegible] բնակվող՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված կամ կյանքի [illegible] իրավիճակում հայտնվելու վտանգի (ռիսկի) ներքո գտնվող երեխաներին

ըստ անհրաժեշտության տրամադրում է օկուպացիոն թերապիա (շտկիչ վարժանքներով թերապիա),

19) ըստ անհրաժեշտության, իրականացնում է կազմակերպությունում խնամք ստացող, ինչպես նաև իր սպասարկման տարածքում բնակվող՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված կամ կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու վտանգի (ռիսկի) ներքո գտնվող երեխաների խոսքի արատների շտկման աշխատանքների իրականացում,

20) կազմակերպությունում խնամք ստացող, ինչպես նաև իր սպասարկման տարածքում բնակվող՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված կամ կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու վտանգի (ռիսկի) ներքո գտնվող՝ տեսողության կամ լսողության խնդիրներ ունեցող երեխաների հետ իրականացնում է միջավայրին հարմարվելուն և ինքնուրույնությունը զարգացնող աշխատանքներ,

21) ծնողավարման, ընտանեվարության հմտությունների ուսուցման, <<ծնող-երեխա>> իրական փոխհարաբերությունների բացահայտման արդյունքում առկա հոգեբանական խնդիրների շտկման և խորհրդատվական օգնության տրամադրման միջոցով աջակցում է կազմակերպությունում խնամք ստացող, ինչպես նաև իր սպասարկման տարածքում բնակվող՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված կամ կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու վտանգի (ռիսկի) ներքո գտնվող հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողներին,

22) իր իրավասությունների շրջանակներում աջակցում է կազմակերպությունում խնամք ստացող, ինչպես նաև իր սպասարկման տարածքում բնակվող՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված կամ կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու վտանգի (ռիսկի) ներքո գտնվող երեխաների և նրանց ընտանիքների սոցիալ-հոգեբանական, սոցիալ-մանկավարժական, սոցիալ-բժշկական, սոցիալ-իրավական խնդիրների լուծմանը,

23) իրականացնում է կազմակերպությունում խնամք ստացող երեխաների ընտանիքների, ինչպես նաև իր սպասարկման տարածքում բնակվող՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված կամ կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու վտանգի (ռիսկի) ներքո գտնվող երեխաների ընտանիքներում կոնֆլիկտային իրավիճակների կանխարգելմանն ու հաղթահարմանն ուղղված աշխատանքներ՝ նպաստելով ընտանիքում բարենպաստ մթնոլորտի վերականգնմանը,

24) իրականացնում է կանխարգելիչ աշխատանքներ՝ ուղղված կազմակերպությունում խնամք ստացող, ինչպես նաև իր սպասարկման տարածքում բնակվող՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված կամ կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու վտանգի (ռիսկի) ներքո գտնվող այլ երեխաների մոտ թափառաշրջիկության, մուրացկանության, վնասակար սովորությունների ձեռքբերման կանխարգելմանը,

25) կազմակերպությունում խնամք ստացող, ինչպես նաև իր սպասարկման տարածքում բնակվող՝ դաստիարակության դժվարություններ ունեցող, վնասակար սովորություններով, ինչպես նաև հակասոցիալական վարք դրսևորած երեխաներին տրամադրում է թիրախավորված աջակցություն՝ ուղղված ընտանիքի հետ սոցիալական կապերի ամրապնդմանը, վնասակար սովորություններից ձերբազատմանը և սոցիալական ներառմանը, այդ նպատակով, ըստ անհրաժեշտության համագործակցելով նաև <<Սոցիալական աջակցության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ իր գտնվելու

վայրի աջակցող ցանցի և միջգերատեսչական սոցիալական համագործակցության կողմերի հետ,

26) իր սպասարկման տարածքում բնակվող երեխաների ընտանիքների, այդ թվում՝ փոխադրվող ընտանիքների համար կազմակերպում է ուսուցման դասընթացներ՝ ուղղված քաղաքացիական ակտիվ և արդյունավետ կենսակերպի ձևավորմանը, միջանձնային հարաբերությունների կարգավորմանը, ծնողավարման հմտությունների ձևավորմանն ու զարգացմանը,

27) իր սպասարկման տարածքում բնակվող երեխաների ընտանիքների, այդ թվում՝ փոխադրվող ընտանիքների համար ձևավորում է ինքնօգնության խմբեր, կազմակերպում և (կամ) տրամադրում է անհատական և խմբային խորհրդատվություններ՝ երեխաների խնամքը և դաստիարակությունը կազմակերպելու, նրանց սոցիալական մեկուսացումը կանխարգելելու վերաբերյալ,

28) աջակցում է իր սպասարկման տարածքում բնակվող այն կենսաբանական ընտանիքներին սոցիալ-հոգեբանական, սոցիալ-մանկավարժական և սոցիալ-իրավական բնույթի սոցիալական ծառայություններ տրամադրելուն, որոնց երեխաները դաստիարակություն են ստանում խնամատար ընտանիքներում,

29) կազմակերպությունում խնամք ստացող, ինչպես նաև իր սպասարկման տարածքում բնակվող երեխաների սոցիալական միջավայրի սուբյեկտներին, այդ թվում՝ ընտանիքների և երեխաների հիմնախնդիրներով զբաղվող կազմակերպություններին, ըստ անհրաժեշտության տրամադրում է խորհրդատվություն՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող երեխաներին մասնագիտական սոցիալական ծառայությունների տրամադրման վերաբերյալ,

30) իր սպասարկման տարածքում իրականացնում է ընտանիքների և երեխաների հիմնախնդիրների լուծմանը վերաբերող, երեխաների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանն ուղղված հանրային իրազեկման և խորհրդատվական բնույթ կրող աշխատանքներ,

31) <<Սոցիալական աջակցության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ իր գտնվելու վայրի աջակցող ցանցի և միջգերատեսչական սոցիալական համագործակցության կողմերի հետ համագործակցության միջոցով պարբերաբար իրականացնում է իր սպասարկման տարածքում բնակվող՝ երեխաներ ունեցող ընտանիքների սոցիալ-տնտեսական, սոցիալ-հոգեբանական, սոցիալ-մանկավարժական, սոցիալ-բժշկական, սոցիալ-աշխատանքային, սոցիալ-իրավական խնդիրների ուսումնասիրություն և դրա արդյունքում աջակցող ցանցի անդամներին և միջգերատեսչական սոցիալական համագործակցության կողմերին ներկայացնում համապատասխան առաջարկություններ՝ հայտնաբերված սոցիալական խնդիրների լուծմանն ուղղված համարժեք սոցիալական ծառայություններ տրամադրելու վերաբերյալ,

32) իր իրավասությունների շրջանակներում աջակցում է կազմակերպությունում խնամք ստացող, ինչպես նաև իր սպասարկման տարածքում բնակվող՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված կամ կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու վտանգի (ռիսկի) ներքո գտնվող երեխաների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանն ուղղված աշխատանքներին,

33) փարում է կազմակերպությունում խնամվող երեխաների հաշվառման մատյան, կազմակերպությունում խնամվող յուրաքանչյուր երեխայի համար կազմում է անձնական գործ,

34) երեխային կազմակերպությունում տրամադրվող խնամքը դադարեցնելուց հետո վեց ամսվա ընթացքում, այցելությունների կամ հանդիպումների միջոցով պահպանում է կապը երեխայի և նրա ընտանիքի հետ,

35) իրականացնում է կազմակերպության աշխատողների (բազմամասնագիտական թիմի) կարողությունների և հմտությունների զարգացմանն ու փորձի փոխանակմանն ուղղված շարունակական աշխատանքներ,

36) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և կազմակերպության կանոնադրությամբ սահմանված այլ գործառույթներ·

17. Կազմակերպությունն իր սպասարկման տարածքում բնակվող՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված կամ կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու վտանգի (սպեցի) ներքո գտնվող երեխայի 18 տարին լրանալուց հետո, ոչ ավելի, քան երեք տարով, կարող է շարունակել այն սոցիալական ծառայության (ծառայությունների) տրամադրումը, որոնք նրան (և/կամ նրա ընտանիքին) են տրամադրվել մինչև այդ անձի 18 տարին լրանալը, եթե այդ ծառայության (ծառայությունների) տրամադրման դադարեցումը կարող է բացասաբար անդրադառնալ տվյալ անձի (կամ նրա ընտանիքի) սոցիալական ներառման և (կամ) ինքնօգնության ու ծագած հիմնախնդիրներն ինքնուրույն լուծելու ունակությունների զարգացման և (կամ) սոցիալական խնդիրների լուծման վրա և (կամ) խոչընդոտել տվյալ անձի առողջության և (կամ) մասնագիտական և (կամ) սոցիալական վերականգնմանը:

III. Կազմակերպության ձեռնարկատիրական գործունեությունը

18. Կազմակերպությունը ձեռնարկատիրական գործունեությամբ կարող է զբաղվել միայն օրենքով կամ հիմնադրի որոշմամբ ուղղակիորեն նախատեսված դեպքերում և գործունեության տեսակներով: Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով կազմակերպությունը կարող է զբաղվել միայն լիցենզիայի հիման վրա:

19. Կազմակերպությունն իրականացնում է ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և կազմակերպության կողմից ընդունված իրավական ակտերով սահմանված պահանջներին համապատասխան, վճարովի հիմունքներով տրամադրում է հետևյալ սոցիալական ծառայությունները (սոցիալական աջակցության վճարովի (համավճարով) ծառայությունները).

ա. դպրոցական ժամերից հետո, դպրոցահասակ երեխաների հետ ուսումնական դասընթացի պարապմունքների անցկացում.

բ. հաշմանդամություն ունեցող երեխաներին տնային պայմաններում խնամքի տրամադրում.

գ. ուսուցում երգի, պարի, նկարչության, կարուձևի և այլ խմբակներում.

2) գորգեղենի, ձեռագործ ապրանքների. փայտե արտադրատեսակների և հուշանվերների արտադրություն.

20. Կազմակերպությունը ձեռնարկատիրական գործունեության ընթացքում ստացված շահույթն օգտագործում է սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացման համար՝ հիմնադրի սահմանած կարգով:

IV. Կազմակերպության կառավարումը

21. Կազմակերպության կառավարումն իրականացնում են հիմնադիրը (Հայաստանի Հանրապետությունը)՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության, նրա լիազորած պետական մարմինը՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ լիազորված պետական մարմին) և գործադիր մարմինը՝ ի դեմս տնօրենի:

22. Հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

1) կազմակերպության հիմնադրումը.

2) կազմակերպության գործունեության առարկայի և նպատակների. այդ թվում՝ նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը,

3) կազմակերպության վերակազմակերպումը և լուծարումը,

4) կազմակերպության գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունքը, բացառությամբ <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի:

23. Կազմակերպության ընդհանուր կառավարումն իրականացնում է լիազորված պետական մարմինը: Լիազորված պետական մարմինը՝

1) հաստատում է կազմակերպության կանոնադրությունը և դրանում կատարվող փոփոխությունները,

2) կազմակերպության կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է նրա կառավարման մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,

3) հաստատում է կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող՝ պետությանը պատկանող գույքի կազմը,

4) ապահովում է կազմակերպության բնականոն գործունեությունը և պատասխանատվություն կրում դրա չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար,

5) իրականացնում է վերահսկողություն կազմակերպության գործունեության նկատմամբ,

6) հիմնադրի անունից կազմակերպության տնօրենի հետ կնքում է աշխատանքային պայմանագիր,

7) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում կազմակերպության տնօրենի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները,

8) քննում է կազմակերպության գործունեության մասին հաշվետվությունները, քննում է նրա գործունեության վերստուգման արդյունքները,

9) վերահսկողություն է իրականացնում կազմակերպությանն ամրացված պետական սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ,

[illegible] գործունեություն է իրականացնում կազմակերպության սեփականության [illegible] նկատմամբ,

[illegible] հանձնարարություն է տալիս կազմակերպության գույքը օգտագործման կամ [illegible] հանձնելու համար,

[illegible] հաստատում է կազմակերպության տարեկան հաշվետվությունները և տարեկան [illegible],

[illegible] նշանակում է կազմակերպության լուծարման հանձնաժողով և հաստատում [illegible] հաշվեկշիռը.

14) իրականացնում է «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, հիմնադրի որոշումներով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

24. Կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է տնօրենը, ում պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է լիազորված պետական մարմինը:

25. Տնօրենի հետ կնքվում է պայմանագիր, որը հիմնադրի անունից ստորագրում է լիազորված պետական մարմնի ղեկավարը: Պայմանագրով սահմանվում են տնօրենի իրավունքները, պարտավորությունները, պատասխանատվությունը և փոխհարաբերությունները լիազորված պետական մարմնի հետ, նրա աշխատանքի վարձատրության պայմանները, պայմանագրի դադարեցման օրենքով նախատեսված բոլոր հիմքերը և օրենքով ու այլ իրավական ակտերով նախատեսված պարտադիր պայմաններ, ինչպես նաև այլ դրույթներ, որոնք անհրաժեշտ կգտնեն պայմանավորվող կողմերը: Պայմանագրի դրույթները չեն կարող հակասել Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրության պահանջներին:

26. Տնօրենը պետք է ունենա բարձրագույն կրթություն: Տնօրենը պետք է հանձնապատասխանի օրենքներով և այլ իրավական ակտերով տնօրենի մասնագիտական կրթությանը, որակավորմանը և աշխատանքային փորձին ներկայացվող պահանջներին:

27. Տնօրենը՝

1) առանց լիազորագրի հանդես է գալիս կազմակերպության անունից, ներկայացնում է նրա շահերը և կնքում է պայմանագրեր,

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, հիմնադրի և լիազորված պետական մարմնի որոշումներով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է կազմակերպության գույքը, այդ թվում ֆինանսական միջոցները,

3) տալիս է կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր,

4) աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում կազմակերպության աշխատակիցներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր,

5) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ,

6) կատարում է աշխատանքի բաշխում իր տեղակալների միջև,

7) սահմանում է կազմակերպության կառուցվածքը և կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունը՝ լիազորված պետական մարմնի հանձնայնությամբ,

[illegible] օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների [illegible] արձակում է հրամաններ, տալիս կատարման համար պարտադիր [illegible] և վերահսկում դրանց կատարումը,

[illegible] սահմանված կարգով լիազորված պետական մարմին է ներկայացնում [illegible]ության եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշիվը,

[illegible] հաստատում է ձեռնարկատիրական գործունեության եկամուտների և ծախսերի [illegible]հաշիվը,

[illegible] իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող այլ լիազորություններ:

28. Տնօրենը պատասխանատվություն է կրում օրենքների, այլ իրավական ակտերի, հիմնադրի կամ լիազորված պետական մարմնի որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պայմանները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

29. Տնօրենը չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

30. Տնօրենը լրիվ գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով կազմակերպությանը և (կամ) պետությանը պատճառած վնասի համար: Նրա լիազորությունների դադարեցումը հիմք չէ պատճառած վնասը հատուցելու պարտականությունը չկատարելու համար:

31. Տնօրենի բացակայության ժամանակ, տնօրենի լիազորություններն իրականացնում է լիազորված պետական մարմնի գրավոր որոշման համաձայն նշանակված այլ անձ:

32. Կազմակերպության աշխատողների իրավունքները, պարտականությունները և աշխատանքային գործառույթները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով, սույն կանոնադրությամբ, աշխատանքային և կոլեկտիվ պայմանագրով:

V. Կազմակերպության սեփականությունը և գույքը

33. Կազմակերպության սեփականությունը ձևավորվում է կազմակերպության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև կազմակերպության գործունեության ընթացքում արտադրված ու ձեռք բերված գույքից:

34. Կազմակերպության գույքի ձևավորման աղբյուր կարող են հանդիսանալ նաև Հայաստանի Հանրապետության ու օտարերկրյա պետությունների իրավաբանական և ֆիզիկական անձանց կատարած ներդրումները, բարեգործական, նպատակային հատկացումներն ու նվիրատվությունները, կտակած գույքը:

35. Կազմակերպությունն իրավունք ունի օրենքների, լիազորված պետական մարմնի որոշումների և սույն կանոնադրությանը համապատասխան՝ իր հայեցողությամբ տիրապետել, տնօրինել և օգտագործել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը, այդ թվում ֆինանսական միջոցները:

36. Կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող գույքի նկատմամբ հիմնադիրը չունի իրավունքներ՝ բացառությամբ կազմակերպության լուծարումից հետո մնացած գույքի:

37. Կազմակերպության սեփականության պահպանման հոգսը կրում է կազմակերպությունը:

38. Կազմակերպության սեփականության վրա կարող է բռնագանձում տարածվել միայն դատական կարգով:

39. Հիմնադիրը կարող է կազմակերպությանն անժամկետ ու անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել ցանկացած գույք:

40. Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնել իր կողմից կազմակերպությանն ամրացված գույքը:

41. Կազմակերպությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարել, գրավ դնել, հանձնել անհատույց օգտագործման:

42. Հիմնադրի կողմից կազմակերպությանն ամրացված անշարժ գույքի կամ պետական պարտադիր գրանցման ենթակա գույքի նկատմամբ կազմակերպության օգտագործման իրավունքը ծագում է դրանց նկատմամբ իրավունքի պետական գրանցման պահից:

43. Կազմակերպությունն իր կարիքների համար գնումները կատարում է <Գնումների մասին> Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

VI. Վերահսկողությունը կազմակերպության գործունեության նկատմամբ

44. Կազմակերպության գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են հիմնադիրը, լիազորված պետական մարմինը, հիմնադրի կողմից լիազորված, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ պետական կառավարման մարմինները:

45. Կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների արտաքին հավաստագրումը ենթակա է վերստուգման (աուդիտի)՝ լիազորված պետական մարմնի ներքին աուդիտի բաժնի կողմից:

VII. Կազմակերպության հիմնարկները, մասնաճյուղերը և ներկայացուցչությունները

46. Կազմակերպությունը կարող է ունենալ հիմնարկներ, մասնաճյուղեր կամ ներկայացուցչություններ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքին, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքին և իր կանոնադրությանը համապատասխան:

47. Կազմակերպության հիմնարկները, մասնաճյուղերը կամ ներկայացուցչություններն ստեղծվում են հիմնադրի որոշմամբ, իսկ հիմնադրի կողմից ուղղակիորեն նախատեսված դեպքում՝ լիազորված պետական մարմնի որոշմամբ:

VIII. Կազմակերպության վերակազմակերպումը և լուծարումը

48. Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել հիմնադրի որոշմամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված

[illegible]: Կազմակերպությունը դատական կարգով կարող է վերակազմակերպվել [illegible] սահմանված դեպքերում և կարգով:

[illegible]. Կազմակերպության լուծարմամբ նրա գործունեությունը դադարում է՝ առանց [illegible]ունքները և պարտականություններն իրավահաջորդության կարգով այլ [illegible]ց անցնելու:

[illegible]. Կազմակերպությունը կարող է լուծարվել հիմնադրի որոշմամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով: Այն կարող է լուծարվել նաև սնանկության հետևանքով:

[illegible]. Կազմակերպությունը դատական կարգով կարող է լուծարվել միայն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:

52. Կազմակերպության լուծարման դեպքում նրա պարտատերերի պահանջների [illegible]արարումից հետո մնացած գույքն ուղղվում է Հայաստանի Հանրապետության [illegible]ական բյուջե: